ՏԵՂԻ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դամասկոսի հայոց թեմի Առաջնորդարանի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին առաքված տեղեկագրի համաձայն՝ սույն թվականի օգոստոսի 15-ին Դամասկոսի հայոց թեմի Առաջնորդարանում տեղի են ունեցել Ազգային Գավառական ժողովի (Թեմական ժողովի) ամբողջական կազմի ընտրություններ: Ընտրությունները կազմակերպվել են Դամասկոսի Ազգային քաղաքական ժողովի և Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու խորհրդի նախաձեռնությամբ և անցկացվել ըստ Ազգային Սահմանադրության կանոնների, Ընտրողական քննիչ հանձնախմբի հսկողության ներքո:

Նման ընտրություն, մասնակցությամբ Դամասկոսի ազգային բոլոր կազմակերպությունների, վերջին անգամ կազմակերպվել էր երեսուն տարի առաջ:

Նորակազմ Ազգային Գավառական ժողովը բաղկացած է քվեների առավելագույն ձայներով ընտրված տասնմեկ աշխարհականներից և Դամասկոսի Կրոնական ժողովի երկու եկեղեցականներից: Ըստ Ազգային Սահմանադրության՝ Գավառական ժողովի նախագահն է Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ վրդ. Նալբանդյանը:

Այսուհետ Ազգային Գավառական ժողովի նորընտիր անդամները Դամասկոսի հայոց թեմի առաջնորդի գլխավորությամբ կլծվեն թեմի պայծառացման ու բարգավաճման պատասխանատու ծառայությանը՝ի փառս Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքներն է հղել Դամասկոսի Ազգային Գավառական ժողովի նորընտիր անդամներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ